

բից միջև դեռ պահանջանք յարաբերութեանց վերջնական խղճում չի նշանակեր, քանի որ Գեորգիանտան Խորհրդական Պ. Պատմի որ արձակուրդով Փարիզ կը գտնուէր, Կ. Պօլիս կոչուեցաւ իր պաշտօնին գլուխն անցնելու և առկախ խնդիրներու մասին իր բանակցութիւնները շարունակելու. այսու հանդերձ Ապտիւլ Համիտի խորհրդականները նկատմամբ մեր Գեորգիանտանի գեղեցիկ թեան ծանր շարժումը մին է.

« Պ. Գեորգիանտան-կը յաւելուեալ Francis-Օգոստոս 22 ին (ն. Տ.) Պ. Տէլքասէի հետագիր մը ուղղելով կը ծանուցանէր թէ՛ ինքը քարափնեբու խնդիրէն չէր կրնար զտուել Պ. Պ. Լորանտօի, Գիւպիտիի և Վօրքալի պահանջները՝ զոր ունին Օսմ. կառավարութեանէն. թէ այս երեք պահանջները հաւաքարար մեծ գումար մը կը կազմեն և ամենը մէկանց կարգադրել անհրաժեշտ է. - Սուլթանը Գեորգիանտան այս յայտարարութեան ապահով չէր կրնար, ուստի Պ. Տէլքասէ, Օգոստոս 23 ին, հետագրեց Պ. Գեորգիանտան թէ իրաց սոյն երկրի մը ընթացքը Գեորգիանտան արժանապատուութիւնը վերաբերելու հանգամանք ունենալով, հարկ էր անմիջապէս ֆրանսա վերադառնալ և Պ. Գեորգիանտան, ըստ այնմ՝ Սուլթանին ծանուցանելու ու մեկնելու մէկ բնաւ:

Ապտիւլ Համիտ բաւական մտահոգութեան մէջ ինկաւ ու մասնաւոր Խրատելով մը յայտարարեց քարափնեբու ընկերութեան հանդիստ կերպով շարունակել իրենց շահագործութիւնը՝ իրենց արուած առանձնաշնորհանց համաձայն՝ սրով բաւական յուսադրեց թէ՛ մեր ամեն պահանջներուն գոհացում պիտի տար Սուլթանը:

« Պ. Լորանտօ և իր երկու ընկերները հին հաշիւ մըն է զոր կը պահանջեն Օսմ. կառավարութեանէն, բաւական գումար մը՝ որ 17 միլիոն ֆրանկի կը հասնի և որ ծանր կը կաշի ն. Կ. Վեհափառութեան ժրջաբեմնադրութեան վրայ, ուստի զանազան ձեւերով խնդրել որ օրի ձգձգեց ու վերջապէս որոշեց որ բնաւ չի վճարէ. Խորհեցաւ թէ առկա մնացած այնպիսի գումարի մը համար Ֆրանսական Հանրապետութիւնը իրեն դէմ պատերազմ չի պիտի հրատարակէր. Սակայն Սուլթանը պէտք է քիչ մը իրար անցնի. Սոյն առկա հաշիւն չի կարգադրելուն համար չէր որ Ֆրանսական կառավարութիւնը յետ կաշի թուրքիայէն իր դեպքերը և թէ նաւային ցոյց մը պիտի ընէ ալ՛ Ֆրանսա միանգամ ընդ միտը պիտի մտքաւորէ յանձնի իր դեպքերին ըզմանդակ Ֆրանսայի եղած անարգանքը Ապտիւլ Համիտի կողմէ՛ որ երկուս խոստանազանց գտնուեցաւ. Դրամի խնդիրը նշանակութիւն չունի բնաւ. Ֆրանսական ազգին կրած նախախնայքն է որ հատուցում կը պահանջէ:

Ահա երկրի մը քաղաքականութեան դաւաճան հետեւանքը. թուրքիա պարտաւորուած է ուրեմն քարափնեբու հաշիւն հետ վերադրելու հին հաշիւն ալ, ամբողջ 17 միլիոն օսմ. սակի, մաքրելէ ետքը, Ֆրանսայի պատերազմը բերելու համար հատուցում մըն ալ ընել:

Alea Jacta est. MEROWIG

ՏՈՒՐՈՒՄ Ա. ՇԱԿԱՐԵԱՆ

Այս անգամ հաստատուած ըլլալով ի Գահերէ, կը բնակի Շարա Ապտիւլ Ազիզ փոքրը, Ապտիւլի պահականցին քով, թիւ 4 բնանարանի երկրորդ յարկը:

Հիւանդ կ'ընդունի ամեն օր կէս օրէ առաջ Ժամը 9-11, իսկ կէս օրէ յետոյ 3-5. Աւրաթ օրերը աղքատաց ճիւղ դարձանում:

Մասնաւոր խնամքով կը դարմանէ ներքին գործարանաց և միզանքի (ափրոզիտեան) հիւանդութիւններ:

ԹՇՈՒՆՈՒ ԱՂՁԻՅ ՄԸ

— ԳՅՕԳ —

Տեսայ, անցաւ դիմացէն, սիրտը ցաւով երեքաց. . .
Դաւիթանդոյր, տառանկոտ, գլխիկը՝ կոր կը նեւար:
Վարդ, ինչ շատ շուտ թռչներ էր հրապոյր, ինչ շուտ սպառած:
Փոսիբու մէջ փորուած խոր աչքերը՝ մութ ու խաւար,
Տեսայ, անցաւ դիմացէն, սիրտը ցաւով երեքաց. . .

Դեռ ետեւէն կը նայիմ, աւաղելով ինքը լուս. . .
Կը խորհիմ պահ մ'անի չէր. . . Տարակոյր չ'ուշանար
Լալու բուր պէտ հեռուն, ինձ վայելով տալու լուր:
Իսկութիւնը աւերալ այն թշուարին, որուն յար,
Դեռ ետեւէն կը նայիմ, աւաղելով ինքը լուս. . .

Ո՛հ, հազիւ հազ կը քաշէ. . . որչա՛փ կը թաւ է նըւաղ. . .
Բողբ գեմքին վեր վերցոց. . . սրբեց քրտինքը ճակտին. . .
Կեցաւ. . . հազո՛ց, թաշխինակն չըթուէք ներսուն տարաւ վաղ. . .
Կերթայ. . . ցաւով համակած, չ'զիտեր հող մը չորս դին. . .
Ո՛հ, հազիւ հազ կը քաշէ. . . որչա՛փ կը թաւ է նըւաղ. . .

Իր օրերը կը յիշեմ, օրեր արփոտ դեռ հերու,
Ներկային հետ կը խոցնի հոգիս վերան ողբացող.
Շուշաններու գեղեցիկն էր, քաղցրիկը բոյրերու,
Կեանքի Գարնան զուարթփայլ, վայրերն ամեն՝ մարդ ու ցող.
Իր օրերը կը յիշեմ, օրեր արփոտ դեռ հերու:

Անխելահա՛ս մը, մողոր, նազանք ու շուք, կը ճեմէր. . .
Տարիաչը՛րիկ Ստոբերներ ստուարացան շուրջն ազատ.
Իժի ծնունդ ու լըպիր շէր բուրբառով սեւ քուրմեր
Սուրբեր կարծած էր թշուառն կրակով ալող Մէկէն գատ.
Անխելահա՛ս մը, մողոր, նազանք ու շուք, կը ճեմէր. . .

Ու վերացաւ օրէ օր Շըլացու մին թեւերով, Վարը բացուող անդունդը շղարշներով աւոր գոց.
Աղբոսներուն այն մէկին անուկընդդր մ'անգորով,
Իջուց սիրոյ մահիճէն խեղճն հող, անլաց ու անկոծ,
Ու վերացաւ օրէ օր Շըլացու մին թեւերով:

Գիրք ոտուըններ փութով կարօտ կէտի մը կայուն,
Գլխուն մագերը փեթոց, ի ս վիճակին ալ գիտակի
Ցանկաց լացով իր ախարհին, դուր, անջրպետն էր անհուն,
Դողաց հասած բարձունքէն տեսած անդունդն անյատակ
Գիրք ոտուըններ փութով կարօտ կէտի մը կայուն,
Գահալէ՛ժ՝ այն անդունդին մէջ, հասած այն բարձունքէն,
Սուս խայտանքով զօղարկած սրտին կրակի զատան,Յուաց խելար, դուր գալու գուռ մ'ափըլ-փեց, ու մէկէն
Գրուած գոհին ուրուականն ընկերակեց անբաժան,Գահալէ՛ժ՝ այն անդունդին մէջ, հասած այն բարձունքէն:

Հիմակ այսպէս խղճե՛ար, գլխիկը՝ կոր. աւսով,
Այտուկորները ցրցուած, ծանթթին է անծանթթ.
Որդեր կեանքը կը կրծնի կուրծքին տակ, ծով մը վրդով.
Հազո՛ւ անպակաս, կը ստակայ թաշխինակէն արեւոտ,
Հիմակ այսպէս խղճե՛ար, գլխիկը՝ կոր, տօթով:
Դարձաւ. . . կ'անցնի դիմացէն, սիրտը ցաւով կ'երբարայ. . .

Ո՛հ, հազիւ հազ կը քաշէ. . . որչա՛փ կը թաւ է նըւաղ. . .
Ա՛լ ո՛չ, նազանք, ու ո՛չ չուք, շըշուկ չ'կայ ճամբուն վրայ,
Լոկ ես եմ որ կ'աւաղեմ ինքը, ծաղիկ թռչնած վաղ.
Դարձաւ. . . կ'անցնի դիմացէն, սիրտը ցաւով կ'երբարայ. . .
3 Հոկտ. 1901 ԳԻՌՈՒՄԱՆ

ՎՐԷԺԻ ՈՒՂԵՒՈՐՆ

— ԳՅՕԳ —
Նախասկրած Փիլիպպոս Խաչիկեանի յիշատակին.

Ք. Գիւղի Հիւսիս արեւմտեան բարձրավանդակի գաղութարէն ուր մողոր դէպի եփրատ տանող ճանապարհով, մի երիտասարդ աղաւթ, գլուխը թեք, Արարական ընտիր ցեղէ սեւ նոճոյքի մը անձնէն բռնած դէպի ցած, դէպի փրփրալից եփրատի աւազուտ ավեր կը դիմէր. . .
Արեւակը բաւական բարձրացած էր հորիզոնէն և մի առանձին հողածու ցայտուածքով՝ կը շողերը ալիստան եփրատայ կիսապղտոր մակերևութիւնը խոտնազոյն երանգով մը կը փառփառէր:

Մայիսի ան բովանդակ սքանչելիութեամբ պարզուած էր բնութիւնը. մեղմիկ զիւրուար սարաւանդի վայրի ծառերուն տուած սուսափունով, քաղցր ու մեղմունջ հովուերգութիւն մը լսելի ընել կուտար:
Իսկ քիչ մը հեռուն, Ք. ի արգաւանդ ու տնաս արտերը, ցողուած արշալուստ մարդարիտներով, ծիածանագոյն կը պսպրային, և չփուռելով զիւրեւորն հետ, կ'անաչառոյն ծովի մը պէս կը սատանէին Ամեն ինչ քաղցր, անին ինչ զընուարթ գիտողին սիրտը մը յուզուի, ու գմայլելի յափշտակութեամբ մը հողին թուրի կ'առնուէր զէպի իտէպակա Աստուածամուշ ալիստեր. . .

Բայց այս ամէն հրապուրելի ու սքանչելի տեսարանները՝ մեղմունջ զիւրեւորն հետ, մեր ուղեւորին սրտին մէջ ոչինչ ուրախութիւն չի ծնուցին. կ'երեւի նա ունէր խո՛ր մտածումներ. . . և ո՛վ գիտէ. . . ի՛նչպիսի մտածումներ. . .
Առանց իր հայեցողքը ալ և անտակ անելու, միտը դէպի վար կ'ընէր նա շատապա. . . կարծես աներևութ ձեռք մը գլխը կը մղէր. . . երբեմն միայն պէպի ետ կը նայէր և վշտալի անուշութեամբ մը նոճոյքին հրամայ աչքերուն մէջ կը դիտէր, երբ կ'անցանին ետանդուն խորիւրջներով մը իր փրփրատ ասանը կը կրօնակար Մեր ուղեւորին համար այդ մշտած իծաղ բնութիւնը այսօր մտայնած ու բողբոլի թըխպած էր անպատած երկինքի մը նման. անվճռելի մտածումներ կարծես սաւանդէն ուղեւորի գլխով. ու այդ գլխին մէջ՝ նստաւ նա մինչև արձա՛ն տեղ, ուրիշ ակնաչիւն հասաւ գրախտածին ալիստը եփրատայ ալացու ռեփոյն ու խորխոր ծրփանքը, որոնք կը համբուրուէին խորհրդաւոր արտին հետ:

Ուղեւորը մէկէն կ'անց առաւ այդ տեղ, և նշմարելի սարսուռ մը անցկեցաւ բողբո մարմնովը. միտացող հրաբուխի մը գոյու թեւերը կը մտաներ կուրծքին երեւելը. . . իսկ ճակատը՝ որ ծածկուած էր ցիւր ու ցան կեպ զարդար սեւ մազերով, հազիւ կարող էին թաղանթի իւր գէմքին վրայ տիրող մտայն. . . շունքը բըբաւ էր քայլերը շարունակել, բայց աներևութ ձեռք մը զգալ կարծեց իր սեւերուն վրայ, և լսելի չըրեցականային աղիւսար ձայն մը, որ խո՛րհուղապարզ հասակի համար ամենէն սիրելի ձայնն էր այն. . . ձայնը մարցաւ. . . իր երեւակայութեան առջև պտտիկըրցաւ, որուն նուիրում էր մի հրեշտակազոյ արարած, որուն նուիրում էր իր ամբողջ էութեամբ. . . իր հոգւոյ բոլոր շերտերն ինքն. . .

Ա՛խ, Սօնա ջան, մրմնջեց ուղեւորն. ու գրլուրը թեքուցաւ աչքուղ կուրծքին վրայ, և վերջուշումներ ունեցաւ. այն օրերին՝ երբ վարդազոյն երազներով կ'օրորուէր, իր բոլոր մընտածումները Սօնային վրայ կ'եղանաչանումով յիշեց բոլոր այն սերային անցքերը, ու անի ին ստուերին տակ, սիրտբոբոթ խոտնազոյութիւնները, թիկնարկները, ու յաւեռնական հաւատարմութեան խոտնազոյութիւնները. և սրացաւ դէպի երեւակայական լայն աչխարճը, մոռցաւ ճանապարհը, օրուան մտադրութիւնը ու ամեն ինչ, միայն Սօնային պատկերը կը տեսնէր իր գէմ, և ուրիշ ոչինչ. . .

Այդ միջոցին արտակարգ զուարթութեամբ մը փայտեցան ուղեւորի աչքերն. բնութիւնը ընտելուած էր անելի ոսկեզն նկարուցաւ իրեն, վեր նայեցաւ և դիտեց կապուտակ երկինքն թէ՛ ինչպէս սպիտակ ամպերու պատաններն շտապ շտապ կը լողային հոս. յիշողութիւնը ուժգնութեամբ արտացոլաց իր ուխտը, հայտատանի աւանդապատկերի աղջիկ Սօնայի ներկայութեամբ. . .

ու այն օրուան բաժանումը. . . ո՛հ, բաժանումը՝ գուցէ յաւիտենապէս. վերջապէս յիշեց այն ամենը, ինչ որ երջանակալից էին, և որոնք անհետացան անդառնալի կերպով:

Արտասուցաւ երկու խոշոր շիթեր գլորեցան ուղեւորի թրամ այտերէն և ինկան խորհրդապահ գիտնի վրայ. կ'արքը սկարանալու վրայ էր և կարծես զգլուս մը պիտի զգար մինչև հոտ տած քայլերուն համար. կըր յանկարծ վերբարտին Սօնան պատկերազար. իր մտաց առջև. բայց այս անգամ աւելի զուարթ, աւելի գեղեցիկ էր քան ուսուցչին ստուերին տակ, վճիւռ ու մշտանա սարքերի կեդրեքին:

Ա՛խ, Սօնա ջան, մեկտեղ գնանք մընջեց ուղեւորն, բայց Սօնան լեռնախն ու ժպուտն մոռցաւ. ձայն ձեռքը իրեն ուրիշ վրայ գրաւ, իսկ ալ ցուցումաբ մեկնեց դէպի արեւելք. . .
Ուղեւորը զմայլած սկսաւ դիտել այն կողմը, ուր Սօնան իր ցուցումաբ ուղղած էր. . .
Հետեւն կ'արձնէր տեսնել արեւելեան հորիզոնին վրայ նկարուած մի կանաչիկ պատկեր, որ փայտեցնելով վրայ նստած էր և կը լըբընուէր կը շարժուէր. երբ մայր բնութեան թեւելով իրեն հասան կնոջ մը մոտեցնել թըխտումները, վրէժ. . . վրէժ. . . մի՛ ինչի, ուխտադրութեամբ մի թուլանք. չէ՛ որ դու Սօնային խոտացար մը լըբանել:

Պար քրտինք մը սահեցաւ ուղեւորի ամբողջ երակաց մէջ, իսկ Սօնա վերստին ժպտեցաւ ուղեւորին և ցուցումաբ դէպի Արեւելք պարզելով աներևութացաւ. . .
Սթափեցաւ նստաւ ուղեւորը, վեր զատկեց սկզբն, կուրծքին վրայ շողացող փամփուշտներ շարժանքը գնեց, պարզական կեռ դաշտանը շտափեց, քաղմանաբուած հրացանը ուսին դարկու և գլուխը խոտնաբնեցող դէպի այն կողմ ուր Սօնան ցոյց տուաւ, և երբ ձայնով կրկնեց նախկին ուխտը, և շտապած սկսաւ ինկել գաղութարի օձապտոյտ ճանապարհներով դէպի եփրատայ աւազուտ արտ:

Հասաւ այնտեղ, ու իր գանուած տեղուցն հանդիպակայ կողմը նշմարեց մի խուրձ ձիւղերներ և ուր մի երկար փայտի ձայրին կը ծածանէր մի ինչ որ սպիտակ շոր, իբր յայտարար նշան ուղեւորներու կողմէն. . .
Պնդացուց իր նոճոյքի թամբը. հանեց սանձը բերնէն, ցատկեց վրան և մտաւ եփրատի թերթերուն մէջ:

Սեւ նոճոյքը փռնալուով կուրծք պարզած Մայիսի հեղեղներով յորքած եփրատի գոտ ու գոյող յորձանքին երիտասարդ ուժով կուրծքը կրաւ. խոտն յորձանքներուն դէմ, ու այդ կուրծք յաղթական հասաւ հակառակ կողմը. . .
Իսկ ուղեւորը՝ եփրատայ փրփրալից ծոցին մէջ ինկ, վերստին կ'անցնէր տեսնել Սօնայի պատկերը, որպէս մի հրեշտակի, որ սաւանուած կարծես իր վերեւ. ձայն ձեռքով բռնած մի պատկ — ազատութեան ճանապարհին մեծանող զինուորին յարգանքի պատկեր էր այն — իսկ ալ մեկնեց դէպի արեւելք, ցոյց կուտար հոն՝ ուրիշ վրէժ. . . վրէժ. . . կը մրմնջէր Մայիսին Հայաստան. . .

ԿԱՐԱՊԵՏ ԹԱԳԻՌՔԵԱՆ

Թ Ղ Թ Ա Ծ Ր Ա Ր Է Ն

Գլխուկ Կրքերու և Գոյքերու Թղթա-ծրարէն հրատարակուած նամակներու պատասխանատուութիւնը, անոնց հեղինակներուն կը պատկանի:

ԱՌ. ՊԱՐՈՆ. Ս. Օ

Յարգելի Բարեկամ
Կերեցե՛ք որ այսպիսի ուշ կը պատրաստուիմ պատասխանել ձեր այն սղկեց յորձանքին, որ Արարի Յ. Թիւրքուն մի քանի սեւակաները կը գրաւէր, բայց պատճառը այն է որ կ'ուզէի անգամ մը աչքէ անցնել Ազգ. Կողմ. Ժողովին այն պաշտօնագիրը, որը զրկուած էր Լաւրան — Ընդհանրաբանից համակերպութեան կողմէ ներկայացուցուած ծանոթ աղերսագրքին ի պատասխան:

Այսպիսի ձեռք պղտիկ պատմութիւն մը պիտի ընեմ, սիրելիս, բայց անուշաղ պիտի նեքեք որ անաչաղ կը խօսիմ:
Ասկէց դեռ կէս դար առաջ, Պօլսոյ այն մեծատունները, որոնք Ամիրա տեսչուրը կը կըրէին, եկեղեցիներ և վանքեր շինելու նախառութիւնն էին, որոնք Ամիրա մը ընկելու մընջուած, մընջուած քանակի զարկեց շինելու անպատեղի. սակայն քիչ վերջը, այս պարտիկ կամ ձեռքը ընեմ զատկեց անաւարտողներ և ուրիշներ ուրաններէ կը վերադառնային, կը խմբուէին և դաւ մը կը լարէին, այն պատիւներուն դէմ, որոց համար երախտագէտ ըլլալ էր պարտերին: Եւ ինչ էր այդ ցասը. — ամենուս ծածօթ՝ Ասանաւանքութիւնը, որով Ամիրանից կ'ընէին պատմական ազաններ: Ա՛լ. ապիստիստ՝ (ժողովուրդ. . . Արք այս տեսքը) պատկերը սեւեղելով այսօր:

որոշում ունի Բագ. Ժողովը (նախագահ) արդե-
հոգ կը յուսա՞ք որ նոյնպիսի ձախողութեան մը
մէջ մտնելու սխալը գործէ . . . կրէք . . .

Մեր այս բարի () աղաները, այսօր կուզեն
վերոյիշեալ նախաձեռնութիւնը () որքէլ Հայաստանի
առեւեակն էր զայն դնել նախկին խաղաղ շաղկի մէջ:
Մինչդեռ զուր անգիտակից այս ազգոգրուած ()
դիւանագիտութեան, կիւլէք կարգ մը վնասու-
կար գրքերը - որոնք այնքան դասն աշխատու-
թիւններով եւ յոգնութիւններով, հազիւ կը-
գին իրենց ակին մէջ ձգել - պահանջիլ ատենը,
բանալու համար անոնց թիրիկները ժողովը-
գին առնել: Ո՛հ, կասեցէք ձեր այդ լուսանք-
ներէն . . . Միթէ այն մեծ աղաները (Աստուած
պահէ . . . գանկերէն) , ձեզի չար չեն կրնար
խորհիլ ազգին սոսակը, զուր կերէք այսօր
այդ գրքերը կուզէք, որ վաղն ալ բարեխոյա-
տակ օրերու մնացորդ այս աղաները նեանցնէք
մեր ազգային գործերու մէջէն:

Մեր բարի աղաները մինակ գրքերը ար-
գիւր են, բայց ես պիտի պատուիրեմ որ գա-
նուի կարգադրուեն ալ բունտարկուին:
Ո՛վ անպիտան, գրքեր որ այսպէս աշխարհ յե-
զաշնչեցիք, պզտիկ մեծին պէմ, ծառան ա-
ղանին դէմ գինեցիք. անիծեալ բլլաք:

Այսպիսի դատմանը կը ծախուին պարոզներու
համար ինչ որոշուած ատենը, բայց ի վը-
նասէն: Ինչպէս հոս ալ Գալստեան-Սորենեան
վարժարան մ'ունինք ինչ կ'ընէք, աւելի լաւ
է՛րբ իբր անոր հոգեւ ծախուած անոգու-
գրաններով վաճառ մը հիմնուի, ուր հեղանոցի
եւ բարեմիտ () արեւոյնք, Հայոց ազգին հա-
մար սօթի են եւ այն ատեն պիտի տեսնենք որ,
Հայոց ազգը շուտ պիտի փրկուի . . . յոռաշնչե-
մութեան փոշու ճամբէն:

Բարեկամ, վերջնական ներքեցէք որ ըսեմ թէ
զուր մտրեաններէն էք . . . Տէր Մարտի հօր ը-
սեմ, ինչ ձեզի ազգակում մը կարգույ, բայց
պայմանաւ որ մէյ մ'ալ այդ կարգի ձախողու-
թեան մէջ չ'իյնաք: Մեղա՛ւ, ընէք . . .

Եւ ես կազօթեմ ձեր փրկութեան:
Տ. ՄԱՐՏԻՊՈՍԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Բ. ԽՅԻՎՈՐ. — Ն. Բարձրութիւնը Կ. Պոլսէն
վերադարձած է իջած է ուղղակի
Բասթի-Թիւի պայտալը. Հինգշաբթի օրը
Մծնթագահ գնացած է մի քանիներու ուն-
կնգրութիւն շնորհելէն ետքը:

ՍՈՒԼԹԱՆԱՅԱՆ ՆՈՒԻՐ. — Բ. Խոտ-
վը իր հրատեղի ուղղութիւնը Սուլթանին
տալու միջոցի, Սուլթանը նուիրած է իրեն
աղամանդակու ժամացոյց մը ր շատ մը
թանկագին քարեր. և Չպուրուի պալա-
տը, ուր այս տարի թափական ընտանիքը
իջած էր:

(Որ ուտէ զհայ անդամին, լցցի բե-
րան նորա կողմով):

ԱՐՄՊԻ. — Սէլան արքայութեան Արա-
պի փաշան Գահիրէ վերադարձած է քանի
մը օրէ ի վեր, և իր նախկին բարեկամե-
րը կ'ընդունի ամեն օր:

Աւելորդ է ըսել թէ՛ այս այն Արապի
փաշան է որ պատճառ եղաւ Աղեքսանդրիոյ
1882 ի ծանր դէպքերուն:

Լուսամտի դասակարգը շատ համակիր
չերեւար անոր, սակայն ռամիկ գասուն հա-
մար մեծ ուրախութիւն կը պատճառէ ա-
նոր վերադարձը:

ՎԵՐՄԱՐՏ. — Պրոստական ներկայա-
ցուցիչ, Պ. Գոգորտան, Հինգշաբթի օրը
Աղեքսանդրիա հասնելով, կէս օրէ յետոյ
Գահիրէ ժամանցի:

ԵՂՈՅՐԱՍՊԱՆ ՏԷՓՈՆՉՆԱԹՕ. — Այս եղ-
բայրասպան դատաւարտեալին թիւլ արուե-
ցաւ վերջին անգամ ըլլալով տեսակցիլ իր
զուակներուն հետ. տեսակցութիւնը խիստ
արտաուշ եղաւ. Տէփօնճախիժ հեծիլը
տանքներ ունեցաւ:

ԱԶԻ

Տիար Տիգրան Մինասեանի հասցէին
ուղղուած նամակ մը զրկուած է խճաբո-
թեանա Աղեքսանդրիայէն, իր տիրոջ յանձ-
նուելու համար:

Այս նամակին ուէրը անձնօթ լինելով
մեզ, կը ծանուցանենք որ Արշալոյս ի
խճաբոթեան գիծէ և սամալ իր նա-
մակն:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Նիսիեայ (Նաբայ) 1 Հոկտ. — Պոերնե-
րու ստաւ խումը մը՝ սկսեցինք 26 ին
Թաքսիմ-Հիլի մէջ կանաւորներու խմբակ
մը յանկարծակի թերած իր շուած է:

Լոնսն 2 Հոկտ. — Լորս Բիլլեր կը սե-
ղեկացնէ թէ՛ 1000 հոգի թաղիացած քրչ-
նամի գործերու կողմէ՛ Բեֆեյիլի քանակա-
նեղոյն վրայ եղած գիշերային յարձակու-
մը մեծ կորուստներով եւ մղուած է: Մեր
կորուստներն են 2 այսոյ և 31 զինուոր թա-
պանուած, 14 այսոյ և 114 զինուոր վիրա-
ւորուած: Գնդապետ Բեֆեյիլն ալ թերթօրէն
վիրաւորուած է, և կը յայտարարէ թէ՛ ա-
մենէն ալ ծառայողն է փախուի մը ցոյց
տուած են: Այսպէս օրէն մէջ կորուստներ
կը թերթօրէն եւ ստեղծուած են:

Բեքսաուն 2 Հոկտ. — Օհաննէսպուրի
նախկին հանաւոր Մասախարաք, Պ. Պրոս-
մա մասնաւորներն և վաստրեա՞ յանգաւոր
ճանչցուելով հրացանի թաղուցաւ:

Բեֆիլ 2 Հոկտ. — Վի գորայեցի 1500
գորով փախուցած է Թրիասի ապստամ-
ները, որոնք այսօր էին գերակալի վա-
նասուն մը: 200 ի մաս ապստամներ կոր-
սուած են և շատ մը քանակակցներ ա-
զատուած են:

Պայմանագրի վստահութիւն ետքը,
Գերմանները հանձն են վերադարձնել ստա-
ղաւորայիններուն ճշմարտ գործիները, սա-
կայն 2 ինասուն այդ շնորհը թերթօրէն յե-
տագոյն է, գանձով վերստին իրենց սեղերը
հաստատու յոգնութիւնն ազատ մնալու
համար:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԵ

ԱՅԼԱՐՀԵՍ ԲԺԻՇԿՆԵՐԸ. — Բարեկի մէջ
հեաաբարաշարժ վերակազմը մը եղած է
որով այստարի վրայ գտնուող բժիշկներուն
թիւն է 193,000:

Ահա թէ ինչ կերպով կը բարկանայ այդ-
ահազին թիւը, Ամերիկայի Միացեալ-Նա-
հանգաց մէջ 75,000, Ֆրանսոյի մէջ 51,000
Գերմանոյ և Աւստրոյի մէջ 35,000. Անգ-
ղոյ և իր պալթակտուութեանց մէջ 40,000.
Իտալոյ մէջ 15,000. Սլաւոյի մէջ 7,000.
ևն:

Վիճակագիր ընդները հաշուած են թէ
մինչև այսօր բժշկութեան վրայ 122,000
կարգ գիրք գրուած է, ատենց հաշուելու
250,000 թեզերը և յիշատակագիրները:
Հեղինակներէն 8,800 ը Ամերիկացի, 2,600 ը
Ֆրանսացի, 2,300 ը Գերմանացի նոյնքան ալ
Աւստրիացի և 2,000 ը Անգլիացի են:

Թիթեոնիկներու Անճրեի ՄԸ. — Պը-
րուսայի շրջակաները գտնուող Հեթիկ գիւ-
ղը թիթեոնիկներու անճրե մը եկած է:

Գիւղին բնակիչները իրենց այդները
և գաշտերը երթալու ատեն մեծագոյն զար-
մացած են տեսնելով որ գոյնըգոյն թիթեո-
նիկներու անճրե մը կը տեղայ իրենց վրայ
որոնք օրէն մէջ թռչելէն, դառնալէն և
տունները խոտելէն յետոյ անբերակելի
են ինչպէս որ եկած էին յանկարծակի:

Մարտիներու, գործերու անճրեներ
տեսած էինք, հիմա թիթեոնիկներուն ալ
տեսանք. տեսնելը դուռ ինչի անճրե պիտի
տեղայ:

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ՍՈՒԿԱՒԻ ՎԻՃԱԿԱԳԻՐ. — Միացեալ
Նահանգաց վաճառականական յոնճաթող-
վը հրատարակած է վերակազմը մը, որով կը
յայտնէ 13 տարուան միջոցին պրտահած
երկաթուղւոյ արկածները:

Այս տեղեկագրէն կը հասկցուի թէ՛ 13
տարուան մէջ մեռած են 87,277 հոգի և
վիրաւորուած են 469,320 հոգիներ:

ԱՌՈՂՋԱՊԱՆԱՅԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ. —
Սումանի մէջ 9 ժամտախտի դէպքեր հաս-
տատուած են: Այս պատճառաւ այդ նա-
ւահանգիստէն մեկնող նաւերը քարտնիթի-
նափ պիտի ենթարկուին սակէ յետոյ:

ՍՈՒԿԱՒԻ ԿԱՆԻՄԱԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ. —
Մաք. Գիւղի սպանուելը գոյաւոր ա-
նիշխանականը ըսեր է թէ՛ Վիլհելմ Բ. Գեր-
մանոյ կայսրն ալ, այս անգամ պիտի պան-
նուի:

ԲԻՒԿԻՆԻ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ. — Թը-
րանիակի դժբաղք ծերունագործ նախա-
գահը որ Հոլանտա կը գտնուի տկար վի-
ճակ մը ունի և բժիշկները պատուիրած են
տաք կլիմայ մը երթալ այս ձմեռն անցնե-
լու համար սակայն նախագահը ըսած է թէ
փոխանակ նիս կամ նափօրի երթալն կը
նախընտրէ թրանսիլ պատնալ:

ՇԱՏ ՈՒՇ. — Սեպտեմբեր 13 ի գիշերը
50 հեծեալ զինուորներ Լիթէն պուրբէն մեկ-
նեցին Տիւրքիստանէն գտնուող սպարակ
մը երթալու համար, Տըլաբէյ զորա-
վարը իր ընտանիքով և սպայակազմով բըռ-
նելու նպատակաւ:

Սեպտ. 19 ին ատուուն կանուխ յար-
ձակմամբ գրաւեցին ադարալը բայց Տըլա-
բէյ գիշերով փախած էր անկէ: Տասն
Պօլները այս առիթու բունտարկուցեցան:

ԹԱԿԻՐԻՍ ԵՒ ՏՐԱՆՍԻԱ. — Սեպտեմ-
բեր 24 ի ժողովի միջոցին Ֆրանսական նա-
մակատան անօրէնը, ի ներկայութեան եր-
կը թարգմաններու վաճառատ յոյճարդ է
պարտակի մը բաւարարմանը համար:

ՏԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ

Հոկտեմբեր ամսոյ 1 էն ԱՌՇԱԼՈՅՍԻ
Խճաբոթուած և Տարաբի փոխադրուած
է Տարաբի-Մէհուպիլ, թիւ 43 տան երկ-
րորդ յարկը:

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Չ Ի

ԱՐՇԱԼՈՅՍԻ քաժանորդագրութեան և
այլ ամեն կարգի Տարաբիական յոնճա-
բարութեանց համար ուղղակի պէտք է դի-
մել խճաբոթութեան, կամ՝ վերաթեան
համար, ՏԻԱՐ ԿԱՐՄԱՊԵՏ ԵՐՁՆԱՅԱՆՆԻՆ,
Ի Շարա Ապտ-իւ-Աղիզ:

ԱԶԳԱՏԻՆ ԼՈՒՐԵՐ

Աղեքսանդրիայէն կը գրեն մեզ.
Ճամբորդութենէ դարձին առիթու,
Բարձր. Խոտվը անցեալ Հինգշաբթի օր ըն-
դունելութիւն մը կատարեց Բասթի-Թիւի
պալատը որուն ներկայ գտնուեցաւ վիճա-
կիս Առաջնորդ Գեր. Յովսէփ Սրբազան Այ-
վազեան, իր հետն ունենալով Ա. Վահրամ
Ի. Վ. Աղարեան և Առաջնորդարանի Բար-
տուղար Տ. Լեւոն Միտիչեան:

ՎԱՐՄԱՐԱՆԱՅԱՆ ՀԱՆԻԿՍ. — Արդէն
երկիցս յայտարարեցինք՝ քաղաքիս Գալստե-
ան երկուս վարժարանի մրցանակաբաշ-
խութեան հանդէսը սեղի պիտի ունենայ
վաղիւ կէս օրէ յետոյ ժամը 3 ին, Ս. Աստ-
ուածածին եկեղեցւոյ մէջ:

ԱՐԿԱՐ. — Տօնէնի պաշտօնեաներէն
Հայ երիտասարդ մը, Պ. Վիլհելմ Պէլլերէնեան
Ապագայի թրամվէյը մտնելու ատեն գե-
տին ինկաւ և ծանրապէս վիրաւորուեցաւ:
Վիրաւորեալը անմիջապէս հիւանդանոց
փոխադրուած է:

ՏԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ

Հոկտեմբեր ամսոյ 1 էն ԱՌՇԱԼՈՅՍԻ
Խճաբոթուած և Տարաբի փոխադրուած
է Տարաբի-Մէհուպիլ, թիւ 43 տան երկ-
րորդ յարկը:

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Չ Ի

ԱՐՇԱԼՈՅՍԻ քաժանորդագրութեան և
այլ ամեն կարգի Տարաբիական յոնճա-
բարութեանց համար ուղղակի պէտք է դի-
մել խճաբոթութեան, կամ՝ վերաթեան
համար, ՏԻԱՐ ԿԱՐՄԱՊԵՏ ԵՐՁՆԱՅԱՆՆԻՆ,
Ի Շարա Ապտ-իւ-Աղիզ:

ԱԶԳԱՏԻՆ ԼՈՒՐԵՐ

Աղեքսանդրիայէն կը գրեն մեզ.
Ճամբորդութենէ դարձին առիթու,
Բարձր. Խոտվը անցեալ Հինգշաբթի օր ըն-
դունելութիւն մը կատարեց Բասթի-Թիւի
պալատը որուն ներկայ գտնուեցաւ վիճա-
կիս Առաջնորդ Գեր. Յովսէփ Սրբազան Այ-
վազեան, իր հետն ունենալով Ա. Վահրամ
Ի. Վ. Աղարեան և Առաջնորդարանի Բար-
տուղար Տ. Լեւոն Միտիչեան:

ՎԱՐՄԱՐԱՆԱՅԱՆ ՀԱՆԻԿՍ. — Արդէն
երկիցս յայտարարեցինք՝ քաղաքիս Գալստե-
ան երկուս վարժարանի մրցանակաբաշ-
խութեան հանդէսը սեղի պիտի ունենայ
վաղիւ կէս օրէ յետոյ ժամը 3 ին, Ս. Աստ-
ուածածին եկեղեցւոյ մէջ:

ԱՐԿԱՐ. — Տօնէնի պաշտօնեաներէն
Հայ երիտասարդ մը, Պ. Վիլհելմ Պէլլերէնեան
Ապագայի թրամվէյը մտնելու ատեն գե-
տին ինկաւ և ծանրապէս վիրաւորուեցաւ:
Վիրաւորեալը անմիջապէս հիւանդանոց
փոխադրուած է:

